«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Գրիգորյան

Ուսումնական հաստատություն՝ Ն. Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 2

1.Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը---------- 3

2.Գործնական համատեքստ---------- 6

Եզրակացություն---------- 16

Օգտագործված գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ներկայումս զգալի փոփոխություններ են տեղի ունեցել արժեքային ուղղվածության, կյանքի հեռանկարների, վերաբերմունքի, մարդկանց, հատկապես դեռահասների և երիտասարդության կարիքների մեջ: Մարդու համար առաջադրվել են որակապես նոր պահանջներ ՝ նրա կյանքի ակտիվ դիրքի, իր սուբյեկտիվության, ինքնագիտակցության, ինքնորոշման և 4 ստեղծագործական ինքնակարգավորման ընկալման և մոբիլիզացման համար: Անհրաժեշտ է դարձել փոխել ստեղծագործականորեն զարգացած, պատշաճ կերպով կրթված անձի վերապատրաստման համակարգը, որն ունակ է ակտիվ վերափոխիչ մասնագիտական գործունեության՝ նոր պատմական պայմաններում: Ժամանակակից սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումները, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, մշակութային և սոցիալական արժեքների անհամապատասխանությունը և ժամանակակից այլ իրողություններ իրենց անմիջական ներգործությունն են թողնում ուսումնադաստիարակչական գործընթացի, հետևաբար նաև սովորողների արժեքային կողմնորոշումների համակարգի վրա: Դրանով էլ պայմանավորվածէ մեր թեմայի արդիականությունը:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է բացահայտել երեխայի մեջ արժեքային համակարգի ձևավորումը անգլերենի առարկայի դասավանդման ժամանակ:

Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

1.Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը խորհրդային կրթական համակարգի ժառանգորդն էր և կազմավորվել էր նրա հենքի վրա: Խորհրդային Միությունում միասնական էին կրթական խնդիրները, մեթոդական սպասարկումը: Միասնական էր նաև արժեհամակարգը: Մեզ մնում էր միայն տեղայնացնել կենտրոնից եկած որոշումները: Անկախացումից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց:

Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը կախված էր օդում: Փոխվեց ժամանակաշրջանը, փոխվեցին նաև արժեքները, փոխվեցին արժեքային կողմնորոշումները, նախասիրություններն ու պահանջմունքները: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ էր պահանջում: Նոր խնդիրներ առաջ եկան, որոնք հրատապ լուծման կարիք ունեին: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ արժեքներ, որպես մանրադրամ, շուկա նետվեցին: Նորանկախ հանրապետության նոր սերնդի հասարակական կյանքի, արժեքների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ու բարոյական սկզբունքները տարբերվում էին նախորդներից: Կյանքը կառուցվեց նոր կանոնների և նոր նորմերի վրա:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է , որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում. 1-ին փուլ – Դրոշմի: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի ՝ երեխաներն այս փուլում նման են սպունգի, կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները: 2-րդ փուլ – Կրկնօրինակման: Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց: 3- րդ փուլ – Սոցիալականացման: Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը : Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների

ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները: «Արժեք» հասկացության վերոնշյալ մեկնաբանությունները հիմք են տվել գիտնականներին պայմանականորեն առանձնացնելու արժեքների հետևյալ տեսակները՝ նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, 7 գեղագիտական, ճանաչողական և այլ, ըմբռնելու մարդու բնույթն ու էությունը, այն ազդակները, որոնք դրդում են նրան դեպի գիտելիքը և որոշելու նրա իմացական գործունեության շարժիչ ուժերը: Արժեքներն իրենց բնույթով բազմազան, բազմանշանակ են, ինչը թույլ է տալիս համակարգել դրանք՝ ըստ այդ հասկացության տրված մեկնաբանությունների: Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Օտար լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է օտար լեզվի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները,որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում,
- Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում

Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցում: Անձի վարքում դրսևորվող՝ լեզվի կարգավորիչ գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների

կազմակերպումն ու կարգավորումը: Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը: Դրանք հատկապես այն արժեքներն են, որոնք վերաբերում են այլ մարդկանց նկատմամբ հարաբերություններին, բարեկիրթ հաղորդակցմանը, վարվելակերպին, հասարակության մեջ վարվելաձևին, խոսքի մշակույթին, իր խոսքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին: Լեզվի հիշյալ գործառույթների հաշվառումը և տարրական դպրոցում լեզուների ուսուցման գործընթացում էապես կարևորվող արժեքների բացահայտումը դիտարկվում են լեզվական առարկաների ուսուցման նպատակների համատեքստում:

Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի էր թվում: Կրթության հիմնախնդիրներով զբաղված մասնագետներին առաջադրված է ճշգրիտ որոշել և բյուրեղացնել այն գլոբալ արժեքները, որոնք անհրաժեշտ էին քսանմեկերորդ դարի քաղաքացուն: Իսկ որո՞նք են այդ արժեքները, և ի՞նչ մեխանիզմներով էին դրանք հասցվելու սովորողին: Այսօրինակ հարցերը քննարկումների նյութ էին դառնում: Արագընթաց փոփոխությունների, նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում էր իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը:

2.Գործնական համատեքստ

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում:

Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը, ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ: Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Այսօր նրանք մի քիչ մոլորված են, անցման շրջանի մոլորություն է. չէ՞ որ կյանքում շատ արմատական փոփոխություններ, ճամփաբաժաններ եղան, ու հիմա նրանցից յուրաքանչյուրը պիտի գտնի իր արահետը: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով, առաջնորդելով սովորեցնենք: Բարոյական վակուում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշ արժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: Գարեգին Նժդեհն ասում էր՝ «Տո՛ւր հայ մորը թեկուզ քիչ բան, բայց պահանջիր ամեն ինչ, և նա կանի: Տո՛ւր այսօրվա երիտասարդությանը գեղեցիկի, լուսավորի ու վսեմի օրինակներ, վաղը նրա շնորհիվ մենք կունենանք մեր երազած հայրենիքը»:[1]

---

[1] 1.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.
2.Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, Ամարաս, 2006թ.

Օտար մշակույթը ուսումնասիրելով ձևավորում են հարգանք օտար մշակույթի ինչպես նաև սեփական մշակույթի նկատմամբ: Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն այստեղ ինտեգրվող համակարգ է: Այսպես, օրինակ, օտար լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսերդպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը, մանավանդ որ առաջադրանքները բխում են տեքստերի բովանդակությունից: Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը: Ստեղծվում է բարձրամշակույթ լեզվական միջավայր: Ուսուցման մեթոդները ուսումնական նյութի կազմակերպման միջոցներն են, որոնք փոխկապակցված են ուսուցչի և սովորողների գործունեությամբ: Մեթոդը հանդիսանում է կապող օղակ նախատեսված նպատակների և վերջնական արդյունքների միջև: Մեթոդներ ասելով պետք է հասկանալ ուսուցչի և սովորողների փոխհամաձայնեցված գործունեության միջոցները ուսուցման գործընթացում, որոնք ուղղված են սահմանված նպատակներին հասնելուն: Մեթոդների հիմնական բաղադրիչները հանդիսանում են եղանակները: Եղանակ ասելով հասկանում ենք գործունեություն առարկայի հետ, ինչպես նաևբանավոր և գրավոր գործունեություն: Եթե սովորողները կատարում են իրենց առջև դրված խնդիրը, ապա կարելիէ համարել, որ նրանք տիրապետում են ուսումնական աշխատանքի եղանակներին: Ներկայումս յուրաքանչյուր սովորող հետաքրքրված է լեզվի պրակտիկ իմացությամբ: Հաղորդակցվելու ընթացքում սովորողը պետք է հնարավորություն ունենա ազատ արտահայտել իր մտքերն ու զգացմունքները,չվախենա քննադատվելու կամ սխալվելու վտանգից, լինի բոլորի ուշադրության կենտրոնում: Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող սովորողները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի դաս վարող ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

Սովորողները լեզվի տիրապետման և օգտագործման դասերին տարբերում են բանավոր խոսք կառուցելու, կարդալու, գրելու, ստեղծագործելու, հաղորդակցվելու իրենց ունակություններով, ուստի պետք է ուսուցման գործընթացում կիրառել

երեխայակենտրոն մոտեցում այսօր շատ արդյունավետ է համագործակցելով ուսուցանելը: Այս մոտեցման հիմնական գաղափարը սովորողների հետ համատեղ որևէ առաջադրանք իրականացնելու համար հարմար պայմաններ ապահովելն է, ինչը ամրապտնդում է լեզվի տիրապետումը և դրա կիրառումը գործնականում: Համագործակցության ողջ գործընթացում պետք է կարևորվեն սովորողի ինքնուրույն ճանաչողական հետաքրքրությունները:

Միջառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում երեխաներիմոտ զարգանում են ճանաչողական ակտիվությունը, երևակայությունը, նրանք սովորում են քննարկումներ, հարցազրույցներ վարել, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել: Նմանատիպ առաջադրանքները ստիպում են երեխային հասկանալ, որ խմբի հաջողությունը կամ անհաջողությունը կախված իրենցից յուրաքանչյուրից: Ուսուցչի և սովորողի համատեղ աշխատանքը և ստեղծագործական միջավայրում արարումը տալիս են իրենց առատ պտուղները: Միակողմանի կապը վերածվում է եռակողմանիի. ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող: Օտար լեզուների ուսուցման և դրա օգտագործման մեջ մասնագետներն առանձնացնում են հետևյալ ճանաչողական ոճերը.

● դաշտային կամ բնագավառի անկախություն (field independence). դա ենթադրում է անձի՝ մի շարք շեղող գործոններից առարկան առանձնացնելու ունակությունը,

● կիսագնդերից մեկի գերակայություն (left and rightbrain functioning). երբ գերիշխում է ձախ կիսագունդը, ապա մարդն ունի վերլուծական միտք, մտքերը շարադրում է դեդուկտիվ եղանակով, իսկ աջ կիսագնդի գերակայության ժամանակ մտածելակերպը ինդուկտիվ է:

●միջին դպրոցում սովորողը պետք է ծանոթ լինի և հարգանք դրսևորի տվյալ օտար լեզուն ներկայացնող ժողովրդի մշակույթի նկատմամբ,

●ավագ դպրոցում սովորողը պետք է գնահատի տվյալ օտար լեզուն կրող ժողովրդի արժեքներն ու ավանդույթները:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց,

խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Ներկայումս հասարակության սոցիալ-տնտեսական բարեփոխումների շրջանի բացասական հետևանքներից մեկը սոցիալական և անհատական արժեքների համակարգում տեղի ունեցող որակական փոփոխություններն են: Արժեքային կողմնորոշումը մարդու համեմատաբար կայուն, ընտրովի վերաբերմունքն է նյութական և հոգևոր մի շարք արժեքների ու իդեալների նկատմամբ, որոնք դիտարկվում են որպես անհատի կենսագործունեության կարիքների բավարարմանն անհրաժեշտ առարկաներ, նպատակներ կամ միջոցներ:

Արժեքային կողմնորոշումներում կարծես կուտակվում է մարդու անհատական զարգացման ընթացքում ձեռք բերված կյանքի փորձը, որը պայմանավորում է նրա փոխհարաբերությունն այլ մարդկանց հետ, այդ թվում՝ վերաբերմունքն իր նկատմամբ: Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը:

Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: «Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին»:[2]

Ժամանակի հրամայականով այսօր նոր կրթակարգ ստեղծելու աշխատանքներ են տարվում: Արդեն պատրաստ է և քննարկման փուլում է «Ազգային կրթակարգի» նախագիծը, որում ամրագրված են քսանմեկերորդ դարի քաղաքացու արժեհամակարգի բաղադրիչները: Խնդիր, որին ուղղված են կրթության հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների ջանքերը: Այդ փոփոխությունը, ըստ էության, ձևավորում է մեր ապագան: Դա կլինի մի նոր փաստաթուղթ, պայմանագիր՝ այսօրվա քաղաքացու և վաղվա քաղաքացու միջև: Այն

[2] 1.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.
,

կլինի սոցիալական պայմանագիր, կրթության բարեփոխման գործիք: Հայաստանի Հանրապետությունում գործող պետական չափորոշիչը թեև որոշակիորեն արտացոլում էր միջազգային փորձում առկա նմանատիպ փաստաթղթերի սկզբունքները, սակայն ուներ կառուցվածքային, սկզբունքային և բովանդակային մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին հանրակրթության արդյունավետ կազմակերպումը: Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների:[3]

Օտար լեզվի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

- Գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում,գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- Բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության

[3] 1.Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.
2.Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երևան, Ամարաս, 2006թ.

ձևավորումն է» [3, 64]: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի- – 398 – ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և

գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Անգլերեն լեզվի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև անգլերեն լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: [4]

Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական

[4] 4. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.,

դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:

Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է հաղորդակցական արժեքի ձևավորմանը, որն ընդգրկվում է սոցիալական արժեքների խմբում: Իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորման գործառույթն ուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների ձևավորմանը, ինչպես նաև անձի շփման և հաղորդակցման սոցիալական արժեքների ձևավորմանը: Դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Քանի որ դպրոցում լեզվի ուսուցումն իրականանում է չորս կոմպոտենտների միջոցով:

Այսօր օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաի զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու հմտությունների ձևավորմանը: Միաժամանակ, օտար լեզուների ուսուցումը կոչված է էլ ավելի ընդլայնել սովորողների հաղորդակցական մշակույթն ու համագործակցելու կարողությունները, որոնք դյուրացնում են նրանց մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետգործելու հնարավորություններ ընձեռում: Ներկայումս հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները՝ խնդիր է դրվում՝ բարձրացնել անհատի փորձն ու հմտությունները օտար լեզուն միջմշակութային հաղորդակցության մեջ կիրառելու նպատակով, մյուս կողմից՝ լեզվական կարողությունները կարիք ունեն լրացվելու արժեհամակարգային կոմպետենցիայով՝ երաշխավորելով հաջողակ հաղորդակցություն: Օտար լեզվի դասավանդման

շրջանակներում կարևորվում է անդրադարձը արժեհամակարգի զարգացման անհրաժեշտությանը, քանի որ ներկայումս լեզվակրթության բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատարումը արժեքների փոխանցման նպատակով: Օտար լեզվի առարկայական ծրագրում արժեքների ձևավորումը հստակորեն շեշտադրված է՝ ընգրկելով համամարդկային, մարդասիրական, մշակութային, գեղագիտական, սոցիալական, էկոլոգիական կարևորագույն արժեքներ: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացը իրականանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական, տեղեկատվական և այլն: Մեր՝ ուսուցիչներիս դերը շատ մեծ է աշակերտների մեջ ճիշտ արժեհամակարգ ձևավորելու գործում: Քանի որ երեխաները իրենց օրվա ավելի մեծ մասն անցկացնում են ուսումնական հաստատություններում, հրամայական է դառնում, որ ուսուցիչները ստանձնեն իդեալական միջավայր ստեղծելու պատասխանատվությունը:

Արժեհամակարգ ձևավորելուց զատ, յուրաքանչյուր ուսուցչի համար, կարծում եմ աննկարագրելի բերկրանք է տեսնելը՝ իր կատարած աշխատանքի պտուղները գործնականում կիրառված: Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը առարկայի դասավանդման ընթացքում թեմայով հետազոտական աշխատանքը կատարելուց հետո եկանք հետևյալ եզրահանգումներին:

- Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
- Արժեքային համակարգը անքակտելիորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ մշակույթը և հասարակությունը: Ե՛վ լեզուն, և՛ մշակույթը մեծ դեր են խաղում աշակերտների անհատականության և արժեհամակարգի ձևավորման մեջ:
- Առարկաների ճիշտ համագործակցության և միջառարկայական կապերի շնորհիվ է, որ աշակերտների մեջ արժեքները ձևավորվում են ավելի ընդլայնված ու խորը:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին նաև, որ արժեքային համակարգի ձևավորման սկզբում մեծ է ծնողների դերը: Երեխաները ընկալում են համամարդկային արժեքները, որոնք փոխանցվում են նրանց, որպես բացարձակ իրողություն:

Այսօր օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաի զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև խոսքային կարողությունների զարգացմանը նպատակաուղղված առավել փոխներգործուն մեթոդների ու ռազմավարությունների յուրացմանը: Միաժամանակ, օտար լեզուների ուսուցումը կոչված է էլ ավելի ընդլայնել սովորողների հաղորդակցական մշակույթն ու համագործակցելու կարողությունները, որոնք դյուրացնում են նրանց մուտքը համաշխարհային հանրություն և արդյունավետ գործելու հնարավորություններ ընձեռում:

Եզրակացություն

Անձի արժեքային համակարգը ձևավորվում է Ես-ի տարբեր բաղադրամասերի փոխներգործության պայմաններում: Ես-ի հիմնական բաղադրամասերից մեկը ինքնագիտակցությունն է՝ մարդու գիտակցված վերաբերմունքը՝ իր ֆիզիկական, իմացական, հուզական, սեռային, սոցիալական առաձնահատկությունների, պահանջմունքների և հասարակական կարևորություն ունեցող արարքների նկատմամբ: Դա սեփական ես-ի նկատմամբ դիրքորոշումն է: Ինքնագիտակցությունը առանցքային դեր ունի ես-ի կայացման, անհատականության ձևավորման, ինքնակատարելագործման և ինքնաիրացման, ինքնակառավարման գործում: Ինքնագիտակցության մակարդակով են պայմանավորված անձի ակտիվության ուղղվածությունը, արժեքային համակարգը, աշխարհընկալումն ու զարգացման միտումները:

Ինքնագիտակցության զարգացման մակարդակով է որոշվում անձի հասունության աստիճանը: Իր մասին սուբյեկտիվ պատկերացումը ձևավորում է սեփական շարժառիթների, նպատակների, արարքների արդյունքների և հասարակության կողմից ընդունված սոցիալական նորմերի ու կանոնների համապատասխանության, ինչպես նաև ուրիշների գնահատականների հիման վրա: Մտածողության զարգացմանը զուգընթաց զարգանում է նաև ռեֆլեքսիան, և անձնավորության ինքնագիտակցության մեջ հսկայական դրական տեղաշարժեր են կատարվում:

Սեփական անձի գիտակցումը որոշակի ուղղվածություն է տալիս անձի հասարակական գիտակցության ձևավորմանը: Գիտակցության այս մակարդակի ձևավորման համար անհրաժեշտ է, որ սուբյեկտը ներգրավված լինի սոցիալական կառույցների համակարգում, որպեսզի ձեռք բերի հասարակական հարաբերությունների ունակություններ, տիրապետի հասարակության հոգևոր կյանքի նրբություններին, յուրացնի մարդկության ստեղծած հոգևոր և նյութական մշակութային արժեքները, կարողանա ճիշտ գնահատել դրանք:

Անձի հասարակական գիտակցության բաղադրամաս է կազմում բարոյական գիտակցությունը և էթնիկական գիտակցությունը: Ինքնագնահատականը մարդու կողմից, սեփական հատկություններին տրված գնահատականն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents.

2. Bruner J. S., Goodnow J. J. and Austin G. A. A Study of Thinking. Transaction Publishers, 1995.

3. Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, MerrillPalmer Quart, 1957, b. V, 3 (Summer)..

4. Երզնկյան Ե. (գլխ. խմբ.), Օտար լեզուները Հայաստանում. Գիտամեթոդական հանդես, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 2008-2014թ

5. Աստվածատրյան Մ. Գ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, «Լույս», Երևան, 1985թ., 389 էջ https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/

6.Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195